Լպուտյան Սմբատ Գարեգինի

Ծնվել է 1958թ. փետրվարի 14-ին Երևանում, ծառայողի ընտանիքում։

1975թ. ավարտել է Երևանի N 79 միջնակարգ դպրոցը։

1982թ. ավարտել է Երևանի ՖԿՊՀ ինստիտուտը՝ շախմատի մարզիչ մասնագիտությամբ։

1983թ. դարձել է Միջազգային կարգի գրոսմայստեր։

1986, 1988, 1994, 1995թթ. դարձել է Եվրոպայի շախմատի ակումբային գավաթի չեմպիոն։

1997, 2002, 2004 թթ. դարձել է Համաշխարհային շախմատային օլիմպիադայի բրոնզե մեդալակիր։

1999թ. դարձել է Եվրոպայի շախմատի թիմային առաջնության չեմպիոն։

1997, 2001,2005թթ. դարձել է Աշխարհի շախմատի թիմային առաջնության բրոնզե մրցանակակիր։

2006թ. դարձել է Շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոն։

2000-2012թթ. եղել է ՀԱՕԿ-ի գործադիր կոմիտեի անդամ։

2012թ.-ից Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր նախագահն է։

2004թ.-ից ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալն է։

2004-2012թթ. եղել է ՀԱՕԿ-ի «Արդարացի խաղ» հանձնաժողովի նախագահ։

2009թ. դարձել է ՀՀ սպորտի վաստակավոր վարպետ։

2012թ. ընտրվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄ համալսարանի «Շախմատի և սպորտի» ամբիոնի վարիչ։

Անկուսակցական է։

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ։

Ամուսնացած է, ունի 4 երեխա։

Պարգևներ

1996թ.՝ ՀՀ «Անանիա Շիրակացի» մեդալ

2006թ.՝ ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալ

2008թ.՝ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար երկրորդ աստիճանի մեդալ»